

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Առևս-ճակոնական պատեազմը:—Թիւրբական գործերը:—Յուղարիայի, 2հր-
նօգորիայի և Սերբիայի մերձեցումը:

Ցպինչժոուի ճակատամարտից յետոյ պատերազմի ցամա-
քային բամը ներկայացնում էր հակառակ ուժերի հետեւալ
դասաւորութիւնը. ուուսաց բանակը բոնում է հիւսիսից հարաւ-
ձգուող մանջուրական երկաթուղու գիծը, կենտրոն ունենա-
լով խիստ ամրացրած Լեասեանը: Հիւսիսից՝ Մուկդէնից, Խար-
բինի վրայով, անընդհատ նորանոր գնդեր են գալիս և ստուա-
րացնում Կուրոպատկինի զօրաբանակը, որի հարաւային ճիւ-
ղը գործում է Նիւշուան, Հայչէն, Դաշիցաօ, Գայչժոու, Սօիւն
կէտերում:

Գեներալ Կուրոպատկինի ահագին զօրաբանակի դիմաց
փակագծի ձևով ձգուած է ճապոնական առաջին զօրա-
բանակը, կենտրոն ունենալով Ֆընխուանչէն. փակագծի մի ծայ-
րը (հիւսիսային) ուղղուած է դէպի Մուկդէն, իսկ հակառակ
ծայրը դէպի Հայչէն, Երկրորդ զօրաբանակը, ինչպէս գիտենք,
Ցպինչժոուի ճակատամարտից յետոյ խուժեց Կվանտուն և պա-
շարեց Պորտ-Արտուրը: Այդ երկու զօրաբանակներին իբրև օ-
ղակ և զօրավիգ մայիսի 6-ից սկսեց ափ իշնել Դագուշանում
ճապոնական երրորդ զօրաբանակը: Մայիսի 26-ին այդ զօրա-
բանակը գրաւեց Սիւեան և այդպիսով ամրացրեց իր կապը
Կուրօկիի և Օկուի զօրաբանակների հետ:

Կուրօկիի զօրքի հիւսիսային ճիւղը, որ դիմում է դէպի
Մուկդէն, մայիսի 14-ին գրաւեց Այեան, 16-ին Մայմացզը,
18-ին Ֆընշուլին, ապա Սիւասը, Ցպեանչիան և մայիսի 30-ին
Խուայժինսեան և Սինգենատին: Այս վերջին կէտը գտնուում է
Մուկդէնից հիւսիս արևելեան ուղղութեամբ 130 վերստ տա-
րածութեան վրայ: Մակայն հակառակորդների ուշադրութիւնը
գրաւուած էր երկու զօրաբանակների հարաւային ճիւղերի մըր-
ցութիւնով: Մուսաց զօրաբանակի հարաւային մասը գեներալ
Շտակելբերգի հրամանատարութեամբ ունենալով 2½ զօրա-

բաժին (դիվիզիա) հետևակ և 2 զօրաբաժին այրուձի (հեծեալ)՝ մօտ 102 թնդանօթներով դիմեց հարաւ դէպի կվանտուն, նըպատակ ունենալով օգնութեան համնել պաշարուած Պորտ-Արտուրին, Յունիսի 1-ին և 2-ին տեղի ունեցան արինանեղ ճակատամարտեր Վաֆանգուի (Տելիսու) մօտ: Գեներալ Շտակելբերգը ստիպուած եղաւ նահանջել երեք ճանապարհով հիւսային ուղղութեամբ: Յունիսի 4-ին նա արդէն հասել էր Մինիւչին, այնպէս որ ճապոնացիներին չէր աջողուել կտրել նրան զիսաւոր զօրաբանակից: Յունիսի 8-ին ճապոնացիները դրաւեցին Մինիւչին: Երկու զօրաբանակներն էլ այժմ պատրաստում են մեծ ճակատամարտ տալ Գայչժուուի մօտերքում:

Կվանտունեան թերակղզուց եկած լուրերին նայած՝ ճապոնացիները մօտեցել են Պորտ-Արտուրի պարիսպներին և միայն ութ վերստ տարածութիւն է բաժանում հակառակորներին: Պորտ-Արտուրից յունիսի 10-ին ծով են դուրս եկել ուսաց նաւատորմղի 6 զրահակիրներ, 5 յածանաւեր և 10 ականանաւեր և յարձակում գործել ճապոնական նաւատորմղի վրայ, որ բաղկացած է եղել 3 զրահակիրներից և 22 ականանաւերից: Ճապոնացիների կողմից վնասուած է «Շարատակա» հակաականաւը: Աւելի մեծ աջողութիւն ունեցան ուսաները ծովային բեմի վրայ Ճապոնական ծովում: Ինչպէս երեսում է՝ ճապոնացիները չնրատուեցին կորցնելով ապրիլի 12-ին «Կինշչիումարու» փոխադրանաւը: Ուսաց Վլադիկոստոկեան փոքրիկ նաւատորմը բաղկացած երեք յածանաւերից յարձակուեց ճապոնական փոխադրանաւերի վրայ Կորչական նեղուցում: Ահա ինչպէս էնըկարագրում այդ անցքը փոխ-ծովակալ Սկրըդլովը 1904 թուի յունիսի 8-ին Նորիին Մեծութեան ուղղած հեռագրում.

«Ամենահպատակօրէն զեկուցանում են Զերդ Կայսերական Մեծութեան հետևեալը. մայիսի 30-ին ճապոնական բանակի ծովային հաղորդակցութիւնների դէմ գործելու համար մեկնեց յածանաւերի (կրէյսերների) խումբը՝ կազմուած «Մոսսիա» յածանաւերից—փոխ-ծովական Բեղօքրազովի դրօշակի տակ, «Գրոմոյ» և «Միւրիկ» յածանաւերից: Յունիսի լոյս 7-ի գիշերը նաւախումբը վերադարձաւ Վլադիկոստոկի: Իր արշաւանքի մասին նաւախմբի հրամանատարը զեկուցանում է. յունիսի 2-ի առաւօտեան նաւախումբը հիւիսից մօտեցաւ Սիմոսեկիի նեղուցին և գտնուում էր նրանից 20 մղոն հեռաւորութեան վրայ, երբ նկատեց հորիզոնի վրայ շարժուող երկու նաւեր, որոնց ետկից ընկան, բայց չկարողացան համնել հեռաւորութեան պատճառով: Նոյն ժամանակ երեսաց և մի երրորդ նաւ, որին բռնելը յանձնուեց «Գրոմօրօյ» յածանաւին: Այդ շոգենաւը, որ

յետոյ դուրս եկաւ «Խցզումարու» փոխադրանաւը, կանգ չառաւ, չնայելով բոլոր պահանջներին, մինչև որ նրա վրայ չընկան մի քանի սումբեր դրանից յետոյ նա կանգնեց: Մարդիկ սկսեցին նրա վրայից ջուրը թափել իրանց: «Գրօմօքօյը» մի աղդանշանով պահանջեց մարդկանցից թողնել նաւը, որ և կատարեցին երկու մակոյկներով, իսկ ջրում լողացնողներին հաւաքեց կրէյսերի շոգեշարժ մակոյկը և առաւ «Գրօմօքօյի» վըրայ. իսկ «Խցզումարու» փոխադրանաւը՝ 3000-ից աւելի տոնն տարողութիւնով, որ պարապում էր պատերազմի վայրը մարդիկ և բեռներ կրելով, ընկղմեցին թնդանօթի հարուածներով: Փոխադրանաւից կրէյսերի վրայ ընդունուած 105 մարդուց 17-ը օֆիցիէր էին: Ընկղմելով «Խցզումարու» փոխադրանաւը, «Գրոմօքօյից» նկատեցին երկու շոգենաւ և, որոնց վրայ և նա սլացաւ: Երևաց, որ դրանք «Սատումարու» և «Խիտաչումարու» փոխադրանաւերն են, իւրաքանչիւրը մօտ 6000 տոնն նշանակուած ծաւալով: Փոխադրանաւերի վրայ, բացի պատերազմական բեռներից, առաջինի վրայ երևացին հեռագրական վարչութեան վարպետներ 12 օֆիցիերներով, ձիեր և փամփուշաներ, իսկ երկրորդի վրայ՝ 1,000-ից աւելի զինուոր և զինուորական բեռների: «Սատումարուին» տիրելը յանձուեց «Մոսսիա» կրէյսերին, իսկ «Խիտաչումարուին» բռնելը՝ «Գրոմօքօյին», որից «Խիտաչումարուն» աշխատում էր փախչել, թէև մի քանի նախազգուշական թնդանօթագութիւն եղաւ փոխադրանաւի վրայ և ազդանշան տրուեց մարդկանց նաւը թողնելու, բայց նաւը ուզը չդարձրեց և միայն ստիպողական հրածգութիւնից յետոյ սկսեց վայր իջեցնել մակոյկները: Փոխադրանաւը շատ դանդաղ ընկղմուեց, որի պատճառով «Գրոմօքօյին» հրամայւեց շտապել ընկղմել շոգենաւը, որ և իսկոյն կատարեց կրէյսերը: «Մոսսիա» կրէյսերից հալածուած «Սատումարուն», մի քանի հրաձգութիւն ստանալով, կանգ առաւ և ազդանշանի համեմատ սկսեց իջեցնել մակոյկները, որ նրա վրայ առանձնապէս շատ էին: Մակոյկներն իջեցնում էին ըշտապով, մի քանիսը շուր եկան, մնացածներն իրանց վրայ առան խոշոր թուով մարդիկ և դիմեցին դէպի հեռուում երևացող Տօռւակմա և Իկիսիմա կղզիները: Եղանակը հանգիստ էր և ծովը բոլորովին խաղաղ: «Միւրիկ» կրէյսերին հրամայւեց իր վրայ առնել օֆիցիերներին, զինուորներին և ծառայողներին, բայց բոլորի միջից երևաց, որ նաւերի վրայ ծառայող միայն 4 օտարականերին և 25 օֆիցիերների կարելի է առնել. մնացածները փոխադրանաւը չթողեցին. այն ժամանակ «Միւրիկ» կրէյսերին հրաման տրուեց ընկղմել շոգենաւը ականներով: Առաջին պայթու-

նից փոխադրանաւը չընկղմուեց, որի պատճառով հրամայուեց թողնել երկրորդ ականը, որից նաւն սկսեց սուզուել: Փոխադրանաւի գործը վերջացած համարելով, վրայ հասնող մառախուղի պատճառով, նաւախումբը շարժուեց առաջ, Սանարեան նեղուցի ճանապարհին հանդիպեց անգլիական «Ալլատոն» շոգենաւը: Նրան խուզարկելու համար ուղարկուած օֆիցերին նաւապետը յայտնեց, որ Մուրորանից Սինգապուր է գնում 6,500 տոնն ածուխ վրան: Մառայողների հարցուփորձը, դոկումենտների քննութիւնը և պահապանների օրագրի անկարգութիւնը նաւի նախկին գործունէութեան հետ միասին ձապոնիայի համար մաքսանենդ իրեր տեղափոխելու վերաբերութեամբ, ստիպեցին կասկածել նրա բեռի չէզոքութեան մասին և ստիպեցին ուղարկել նրան Վլադիվոստոկ՝ Պետրով 10-դ լեյտընանտի հրամանատարութեամբ զինուորական պահապաններ հետը դնելով, որպէսզի այնտեղի մաքսանենգութեան դատարանում այդ նաւի գործը քննեն: Բացի այդ շոգենաւից նաւախումբն այլևս ուրիշ նաւի չհանդիպեց իր շարժումների ժամանակ: Շոգենաւի վրայ երևաց մէկ ճապոնահպատակ ինտելիգենտ մարդ, որ, ինչպէս երևում է, չէր պատկանում նաւի ծառայողների կազմին:

Ծովակալը չբաւականացաւ դրանով. յունիսի 2-ին նրա ականանաւերը մօտեցել էին ճիշտ եզաչի նաւահանգստին, Խոկահիդո կղզու վրայ, և բռնել ու ոչնչացրել մի քանի արդիւնաբերական և փոխադրող փոքր նաւեր, որոնցից մէկը հասցըրին Վլադիվոստոկ: Այդ նաւերը տանում էին ձուկ և բրինձ Սասեր և Սիմոնոսեկի նաւահանգիստները:

Հետաքրքրական է թէ ինչ բացատրութիւն տուեց ճապոնական կառավարութիւնը յուղուած հասարակական կարծիքին: Ծովային մինիստր Իտօն յայտնել էր թէ «ծովակալ Կամիմուրայի վրայ պարտականութիւն էր զրուած՝ խանգարել վլադիվոստոկեան և պորտ-արտուրեան նաւատորմերի միացման և պահպանել Կորչէական նեղուցը: Եթէ նա իր համար նպատակ դնէր պահպանել ամեն մի նաւ ծովում, նա ըիսկ էր անում երկրին մեծ դժբախտութիւն պատճառելու: Ժամը 8-ին Կամիմովը բան տեղեկացաւ վլադիվոստոկեան նաւատորմի ներկայութեան մասին և արդէն ժամը 9-ից 15 ըոպէ անց նա իր ամբողջ տորմղի հետ սկսեց հալածել թշնամուն: 40 մղոն անցնելով նա մօտեցաւ 4 հանգոյց տարածութեան վրայ թշնամու տորմղին, բայց թանձր մառախուղը հնարաւորութիւն չտուաւ նրան հետևել իր նաւերի ընթացքին: Սակայն օգոստելով անթել հեռագրով՝ նա շարունակում էր հալածել ոռւսաց նաւերը, մինչեւ

որ դրանք փոխելով ընթացքը չանհետացան ճապոնացիների տեսութիւնից»:

Այսպէս ահա ստիպուած է արդարանալ հասարակական կարծիքի առաջ ճապոնական կառավարութիւնը իր ամեն մի անփութութեան համար: Միանգամայն ազատ է համարում իրան արդարանալ ամբողջ մարդկութեան հասարակական կարծիքի և Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնների առաջ սուլթանական կառավարութիւնը, շարունակելով Մակեդոնիայում և Փոքր-Ասիայում ահա աւելի քան քառորդ դար անընդհատ գործադրուող գազանութիւնները: Զափազանց լաւ է ուսումնասիրել եւրոպական քաղաքակրթութեան շահասէր պաստառը սուլթան Համիդը, որպէսզի որևէ լուրջ նշանակութիւն տայ դիպումատիական զանազան կէսրերան դիմումներին և առաջադրութիւններին: Նա լաւ գիտէ որ մինչեւ անձնական շահ չունենան, երբէք խօսքից գործի չեն անցնի զանազան Դելկասսէները, Դոլուսկովսկինները և Սոլսբերինները: Մակեդոնիայում դեռ ևս ոչ մի դրական բարուզքում չիրագործուել և նորանոր ապստամբութիւններ են սպասում այդ թշուառ երկրում:

Աւելի ևս վատթար է ասիական նահանգների վիճակը: Ռուսաց գործակալութեան հեռագրները հետեւալ տեղեկութիւնները հաղորդեցին, որոնց մանրամասնութիւնները երեխ արդէն յայտնի են ընթերցողին տեղական ուսուաց թերթերից և «Մշակից»: Երջելով Բիթլիսի վիլայէթում երեք եւրոպական հիւպատոսները, ուսուաց, ֆրանսիական և անգլիական, հաստատեցին որ թիւքը զօրքը և քիւրդերը սոսկալի գազանութիւններ են կատարել անպաշտպան հայերի վրայ՝ կոտորելով մօտ 5 հազար հոգի և կրկնելով 1904—1905 թուականների անպատիժ մնացած ջարդերը: Նոյն հեռագրներից իմանում ենք որ անգլիական պարլամենտում արուած հարցապնդումին արտ. գործ. մինիստրի ընկեր Պերսին պատասխանել է թէ թիւքը կառավարութիւնը ընդունել է Պոլսում բրիտանական դեսպանի առաջարկը—միջնորդ նշանակել անգլիական, ֆրանսիական և ուսուաց հիւպատոսներին: Իսկ ֆրանսիական պարլամենտում մինիստր Դելկասսէն պատասխանելով Պրեսանսէի հարցապնդումին՝ նկատել է թէ երեք պետութիւնների հիւպատոսների ներկայութիւնը թիւրքա-Հայաստանում մեծ թեթևութիւն է ազգաբնակութեան համար և թէ մի կողմից «չի կարելի խլել թիւքը կառավարութիւնից նրա իրաւունքը՝ ճնշել իր երկրի սահմաններում բռնկած ապստամբութիւնները, թէև միւս կող-

մից չի կարելի չյանդիմանել նրան որ նա Թիւրքիալում պահպանում է վարչական այնպիսի սիստեմ, որի ժամանակ ապստամբութիւնը մնում է միակ փրկութիւն նրա աղջաբնակութեան համար։ Այդ բոլոր ճառերից առայժմ ևոչ մի դրական բան, և Թիւրքիան շարունակում է իր սովորական ընթացքը։

Ահա ինչ է ասում «Русскія Въдомости» լրագիրը իր յունիսի 11-ի համարի մի առաջնորդող յօդուածում՝ խօսելով Մակեդոնիայում և Հայաստանում կատարուող դէպքերի մասին։

«Եւրոպան վճռողապէս, ասում է լրագիրը, հրաժարւում է իր ձեռքն առնել վերահսկողութիւնը Թիւրքիայի ներքին գործերի վրայ, մի բան, որ ամենանպատակայարմար ելքը կը կինէր այն անտանելի դրութիւնից, որի մէջ գտնւում են Թիւրքիայի քրիստոնեայ և նոյնիսկ մուսուլման հպատակները։ Ուրեմն այդ հարցը պէտք է փոխարինել որևէ ուրիշ բանով, որովհետև թողնել Թիւրքական վարչութիւնը այն ձևով, որով նա այժմ կազմակերպուած է, այդ կը նշանակէ մատնել Թիւրքիայի քրիստոնեաներին յաջորդական ոչնչացման։ Եթէ դրա համար դեռ ապացոյցներ են պէտք, վերջին դէպքերը հէնց այդ տեսակի փաստերով շատ ճոխ են։ Սասունում արդէն երկու ամիս է կոտորած է կատարուում։ սարերը ներկուած են արիւնով։ Կոտորուած են մի քանի հազար մարդ։ կանայք բռնաբարուում են և տանջանքների ենթարկուում, երեխաներին խըփուում են ժայռերին և ջարդում, գերի ընկածներին բարբարոսաբար այպանում են։ նրանց տանում են Մուշ, ուր կենտրոնացրուած բանակներում նրանք փթում են ցեխի և հիւանդութիւնների մէջ։ Սասունից մինչև կուլտուրական երկիրները հեռու է։ այնտեղ կատարուող սարսափների լուրը շատ ուշ է հասնում երրուպայի ականջին, ուստի չկայ մէկը, որ կանգնեցնէ ջարդերը, որովհետև հիւպատունները անզօր են փշենութիւրքական իշխանութիւնների կրաւորական դիմադրութիւնը։»

Բալկանեան թերակղու սլաւոնական երեք պետութիւնների—Բուլղարիայի, Սերբիայի և Զերնօգորիայի մէջ—նկատուում է մերձեցում, որ երեկի կապ ունի մակեդոնական հարցի հետ։ Սերբիական թագաւոր Պետրը կրկին անգամ տեսակցութիւն ունեցաւ իշխան Ֆերդինանդի հետ։ Այդ տեսակցութեան մասնակցել է սերբիական արտաքին գործերի մինիստր Պաշիչը։ Տեսակցութիւնից վերադառնալուն պէս խօսյն Պետր թագաւորը իր նախագահութեամբ մինիստրական խորհուրդ է կազմում, որի նպատակը և հետևանքները խիստ գաղտնի են պահպաւմ։

Լ. Ս.